ԱՆԵՑԻ ՎԱՐԴԱՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԳԵԼԻԿ

ՎԱՍՆ ԿԱՌԱՑ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՆԵՐԲՈՂ

Եզական գրուածիս հեղինակն պիտի մնայը յաւէտ անյայտ, եթէ նա ինքն նախահոգակ իմաստութեամբ մտածած չըլլար զրոշմելու,—ծախակողմեան լուսանցից վրայ իսկ,—իւրաքանչիւր տան գլխատառերը, որոնք կը կազմեն խորագրի ամբողջացուցիչ մասն, այսպէս. « ԱՆԵՑԻ ՎԱՐԴԱՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԳԵԼԻԿ »։ Հետաքրքրուեցայ, բնականապէս, գիտնալ և եթէ կարելի է՝ գտնել մեծախորհուրդ վարդապետիս ժամանակն և անոր մասին անդրագոյն տեղեկութիւններ տոհմային պատմութեան և ժամանակագրաց քով, բայց ի զուր. զի Անեցի վերադիր կրող Վարդան վարդապետ մը ուրիշ տեղ յիշուած չէ։ Միայն յամի Տեառն 1307 հեթում թագաւորի հրամանով ի Սիս գումարուած ժողովական հարց մէջ յիշատակուած է նաև Վարդան եպիսկոպոս Անոյ։ Բայց այս չի կրնար նոյնացուիլ Անեցւոյն հետ, քանի որ մանաւանդ այդ եպիսկոպոսին ոչ գրող ըլլալն և ոչ ալ գրուած մը մեզի հասած է երբէք։ Երկրորդ ներբողիս խորհրդապաշտ ոճն և խրթին լեզուն իսկ Նարեկացւոյ դարուն և դպրոցին աւելի յատուկ է՝ քան ԺԴ.-ին։ Հետևաբար Անեցի վարդապետս Ժ. կամ ԺԱ. դարուն ապրող մէկն ըլլալու է, ըստ իս, ու քաջավարժ մեկնողական և քերթողական արուեստին, գուցէ թէ և գրիչ ուրիշ մեկնութեանց։

Գրուածս զէթ ինծի ծանօթ՝ միակ օրինակն է, բաղկացած վեց փոքրադիր թերթերէ, զոր բազմամիտ Հ. Մկ. վարդապետն մեր Զամչեան ընդօրինակած է—յամի Տեառն 1800—Կ. Պոլսոյ Պատրիարքարանի Ձեռագիրներէն։ Զամչեան նկատելով բնագրի ինչ ինչ սխալագրութիւնները՝ ուղղագրած է զանոնք, նշանակելով ի ստորոտս իր ընդօրինակութեան՝ բնագրի տարբեր ընթերցուածներ ևս։

Ազգային բանասէրներէն մէկը ծանօթանալով գրուածիս՝ Հ. Ղ. Ալիշանի հակիրճ մէջբերումէն, խնդրած էր—տարիներ առաջ—այս տողերը գրողէս, որ ամբողջապէս օրինակելով իրեն դրկեմ։ Երկայն որոնումներով հանդերձ՝ չյաջողեցաւ ինծ գտնել յայնժամ, զի տեղէն հանուած և ուրիշ թուղթերու կոյտին մէջ դրուած էր։ Քանի մ'օր յառաջ դեռ զանոնք կարգաւորելու ատեն, առանձին Տուփերու մէջէ, եկաւ ի յայտ, զոր արդ կը փութամ հրատարակել « Բազմավէպ »ին մէջ, թողլով յիշեալ բանասիրին որ Ֆրանսերէն լեզուով ծանօթացնէ նաև Եւրոպացւոց։ Սակայն կանուխէն ըսած ըլլամ, որ ոչ միայն ինքն, այլ և կորովի մեկնիչը և աստուածաբանը իսկ գլխնին շատ պիտի յոգնեցնեն վերահասու ըլլալու համար Անեցի վարդապետիս խորհրդապաշտ բառերուն և բացատրութեանց, որոնք՝ ըստ իս, վարկպարզի գործածուած չեն, այլ խոր և խորհրդաւոր նշանակութեամբ։

Հ. Բ. ՍԱՐԳ.

Ա. կառդ աստուածութեանդ և լծակիցդ քառադիմանդ ի կենդանախարուկեալդդ միշտ, և ի վակաբդ արարածոց, ի մշտահոլով և յանկէզ անիւրդ յարաբարդդդ, և ի կալդ բնաւից երախայրեաց ոստահատին կենդանութեան, երկրպագեմ մշտածագ և շահաւէտ հովանոյդ ձերոյդ եղեալ առ իս զկաթդ կենդանարար՝ բուսուցանել յինէն զբոյս բանաւոր ի բարունակիդ օրհնութիւնդ միշտ և յարաժամ։

Նուրբ և անքնին էութեանն ընդունակք, և հայելիք երկատեսակք բազմաբորբոք

© National Library of Armenia

ճառագայթիցն, մշտաթափք և սքանչելալուր ձայնիւք գեղք յորդառատք, զոր առ երամս հրեղինացն վառիք ծով մշտաբուռալ ի յիմացուածս, և յանգոյն գոյանաք, լինիք բարձող վեհին փառացն։ Զոր մաղթեմ առ քառաղէմսդ՝ փառաւոր ներգործութեամբ և առ իս ձեռնալ ձեր. զի եղայց բոլոր ի ձև սկզբնատին միշտ և յարաժամ։

Հրազընթացք և սրաղարձք ի խոր և ի վեր. ստեղծագործող բանին՝ սուրբ լարք և ուռկանք ոսկետեսակք և բազմաբարք. կալով բոլոր զոյիւքս ի ձեռն ինքնագոյին, որ ի վերայ Ջուրցն միշտ շրջի, և յերկանուն և յանծնունդ ի մեծ ծովէն հանէ մարմին և շունչ ազգի ազգի. և զընտրեալսն առնէ փառակից ձերում դասիդ, և անեղն ի մարմնի եղանիւր, զոր մարդոյ նմանութեամբ ի ձէնջ բարձեալ փառաւորութեան՝ երկրպագի. Զոր կարդամս առ քառակերպսրդ վասն բարձրելոյդ[2] ի ձէնջ սուրբ պատկերիդ, պահել անձին իմում զտիպս տէրունի միշտ և յարաժամ։

Ցանկք բուրաստանին՝ որ ունի առ իւր զծառն կենդանի զոսկեսաղարքն, և զպտուղն համազգի. զոր ի սրբէիցն նուրբ պողոտայն ի մաքրեցելոյն այլ ոչ պահի. և որք ի քառարուխ յիմաստս ձեր մկրտի՝ ի բարունակէն արագահաս պտղարերի ժառանգ Աստուծոյ Հօր և Քրիստոսի ժառանգակից. Զոր և կենդանի և բանաւոր ոստովք մաղթեմ առ քառանունդ, մուծանել զիս ի պարտէզդ աստուածայն և յօդել ի յստան իմ հոմազգի, պտղաբերել զնա միշտ և յարաժամ։

(Առ Մարդն). — ի բազմաղէմ և ի սրբազան ստեղծուածդ, և յընտանի իմոյ ձևոյս և բնութեան բանականիս, մարդդ բազմաթև, որ ունիս առ ձեռինդ զկշիռ զորդւոյ նոր Սիոնի. և զօրութիւնդ և յիմաստութիւնդ որդւոց Ադամայ և բոլոր բանականացս, և նախկին գաղափարդ և ի կնիքդ անփոփոխ. ի ձուլարան դէմդ և ի թագընկալ գլուխդ. ի յանտարակուսելի հանմարդդ, յարդիւնաւոր և յանկարօտ բանականդդ, ի յաստուածաբանդ և ի վարդապետդ յիմանալեաց. փութայ անձն իմ հաղորդիլ ստորի բանիցդ և կենդանանալ ի խօս վասն էիդ. Զոր և համբուրելով զգարշապարդ հրափայլ բանաւորեա առ լեզուս իմ միշտ և յարաժամ։

Վաղվաղատես և փութալուր Այր հրաշից էին, զոր յերկուցեալ համայն էակքս. զի անձէն զտիպդ էաս, արար զմարդն և մարդացար, և ի ձևի քումդ պաշտեցար Աստուած և Տէր ձևիդ, քարոզեցար միակ քո ձեդ. ի տպաւորեալսն բազմացար և փառաց Ցեառն տաղանդ ի յանօթ խեցեղինացն գանձեցար, զոլ կենդանի և մշտախօս քնարաւորք և փողհարք ապագայիցն և անճառիցն ժուժ[3] ազդարար. Զոր առ քեզ զոլով զմուտս ամենայն ձայնիցն և զելս ընդ բնաւս, որովք երկրպագեմք և պաղատիմք՝ առ շնչաւուչ փողդ ահաւոր՝ բանաւոր, զքնար բանիս իմոյ պահել կազմ՝ և ձայնալի, խօսել առ տէրունիսն միշտ և յարաժամ։

Առ հարանարան փեսային՝ ոսկետեսակ աշտանակ, և առ շնորհաբաշխութեանցն հանդէս՝ լապտեր անկարօտ, և տունկ ծիթենի մշտակացազոյն[4]. դահեկան վարձու և շահողաց քանքարացն գանձ անթուելի, թագաւորեցելոցն թագադիր և վիճակացն կարապետ անմոլար, աստուածացելոցն կերպիւդ խոստովանող և աննախանձ երկրպագու, և համբուրեալ օծելոյ և քահանայական ձևիդ վիճակ ճշմարիտ, և զպիր անձանձիր՝ պատարագին վասն էին հաշտութեանն, և բարեխօս անդադար, և կողմանս վտակին պատկառելին վարագոյր. Զոր իբրև զտէրունի տանուտէր զնախատիպ իմ աղաչեմ՝ առնել հաղորդս շնուհաց միշտ և յարաժամ։

Բարունեացն և իմանալեացն դասուն՝ արուսեակ փայլմամբ իմաստիւք, և սարտուցելոյ սերովբէիցն գնդին և յաստեղ-

1. Հաւանօրէն՝ փառաւորութեամբն։
2. Լաւ ևս՝ բարձելոյդ։
3. Թերևս՝ յոյժ։
4. Եւ կամ՝ մշտակաց այգոյն։

© National Library of Armenia

լոցն՝ դէտ լուսաբեր, ի զգաթի կամարին հղելոցն և ապագայիցն՝ նշան հաւատալի, և մելան ոսկի առ գրչին. զոր ձեռամբ էին ընդհանուրքս աշխարհագրին պարտեաց մուրհակքն պատուին, և առ քարտէզ մարմին բանին՝ անուն նոր և սքանչելի փառօք անսուտ դաշամքն որդեգրին. Զոր հանուր հարազատիւք կարդամք առ հարազատ ձեռ՝ մնալ անջնջելի կենդանագրին միշտ և յարաժամ։

Դաստատանի էին վկայ ճշմարիտ և դատապարտելոյ գնդին հատանող սուր երկայրի. ճգանց ճգնաւորացն՝ ապարէզ հանդիսի, և քաջապէս մրցողացն՝ պսակ ոսկեհուռ. անկիրթ մրցողացն՝ վարդապետ վարժասէր, և յապաշխարութիւն ուսարացն՝ ջատագով յուսոյ և բարեխօս անպատկառ. ի հաշտութիւն հօր՝ գիրկ լայնատարած, և յողջոյն կարօտելոցս՝ համբոյր սրբութեան. ի հաւատոյս մատանին՝ անջնջելի դրոշմ. մշտազեն պարարակին արեանն՝ լի[1] ճամբարտար. Զոր բնաւ մկրտելով աղաչեմք զսեռ ձեիդ իմ՝ ի համբոյր սիրոյդ պահել զիս միշտ և յարաժամ։

Անմարմին զուարթուն և անդադար երգեցիկ սիրեցելոյն. ի մասունս[2] իմանալեացն բերկրական բարբառ և աւետաբեր տաւիդ. ի լեզուս պարուց աստեղացն՝ ազդեցութեանն զրոյց և զարթուցման ձայն յօդեալ. ի նուրբ շունչս հոգմոց՝ բանական ծով, և պատրաստական նաւ՝ գոհար բեռամբք, և նաւահանգիստ ամենառատ. խօսուն բուրաստան, և ծաղիկ անթառամ ծածկեալ ի ծոց դշխուհւոյ մոր Սիոնի. հրաշաբեր և կաթնարուխ բանին ստինք՝ ի շրթունս աշակերտեցելոց երկնաւոր մատենագրին. Զոր բանիդ աշակերտելովքդ աղաչեմք զտիպ հարազատիդ, զի Ջամբեսցես առ իս զկաթնդ բանական միշտ և յարաժամ։

(Ցառիւծն).—Նկարեալ անուն և հաւատոր դէմ, յանձնապատան և զարհուրելի բարբառ, հնազանդելոյ զումարիցն սանձք լռութեանց, և փախուցելոց ապատամբիցն հնարաւոր. դարանակալ քինահատոյց և վրէժինդիր բարբ, և հեգնողացն զբէն անպատկառ դատավճիռ. անախտ խորհուրդ և կենցաղ առանձնասէր, բազմահնար և շառաւիղ անքննելի զբեզ քննողաց, անքուն ակն և զուարթուն աննընջելի, սրտից ոստիկան և քնող երիկամանց. որ զանարատողքն զանց առնես և ոչ երևիս սարսելի դիմօք և մահարար ճիրանով. Զոր և գգուելի և զողոքասէր զբարդ աղաչէմ, լինել ինձ ախոյեան առ թշնամիսն իմ միշտ և յարաժամ։

Առ բազուկդ աջակողմեան՝ որ ունի առ իւր զվճիռ եօթնակնքեան. առ ինքնաճառ նամակդ և ի խոտ[3] մանգալոյ բարբառոյ արքայիդ. առ բացումն երկնիցդ և յելս սպիտակ կառավարիդ, խոցով նետիւ մահուն մահարարիդ և մահացելոյս կենդանատուիդ. երկրպագեմ իշխանաց իշխողիդ և թագաւորադէմ սուրբ ձեիդ. և՝ զթագ ճշմարիտ հոմազգիս՝ պահեսցես յանձին իմում՝ ահաւոր և պատկառելիսն իմ միշտ և յարաժամ։

(Ի բեան սուրբ). — Վրան՝ լայնատարած թեւօքդ, և խորան՝ ի վերայ անախտածին կորեանցն առիւծուն. թեք ցողալից և լուսալիր, ցանեալ ի կտակս իմանալեացն ի հաւատ՝ զանքննելի ծագումն, բազմերանգն և երկնագոյն տեսակ թեւոցդ՝ զանախտածինսն և՝ երկնաթռիչս առնէ, և ի թեթև քո մշտաշարժ քաղցրասիրդ շնչոյն իշեալ ջահավառէր, և զարմանաւոր տնօրինեալսն քառանկիւն ի մեր բնութիւնն թռեաւ թեւօք քառաղիմիդ և զուարճացաւ ի վերայ թեւոց հողմիդ. և որպէս զանգոն անզուգական՝ նստաւ ի կայան իւր բնական, յիւր ծանօթ երամքն անդ խոյանան։ Զոր հայցեմ առ թագաւորական սուրբ ձեիդ, ունել զիս ի ներքոյ հովանւոյդ, պահեսցես միշտ և յարաժամ։

(Ի յերեսն սուրբ). — Անքննելի դիմացն և անհասանելի կերպ և անհասանելի էութ-

1. Ընթեռնլի՝ լիճ կամ ի լիճ համատարա։
2. Ի մասունս։
3. Խոստեան գալոյ։

© National Library of Armenia

թեանն նկարագրեալ պատկեր ի քառակուսէ, բնաւիցս եղելոցս օրհնութեանցն՝ քառադէմ ընկալուչ, և ի դաստիարակութիւն եղելոցս՝ քառապատկեր մատակարար. ի մեռեալսն՝ անսխալ շնչողդ յարութիւն, և անծնունդդ մօր որդւոցն՝ անախտածին ծնող և որսասէր կորեանցն առիւծուց. ի մի անձինդ երեսք չորեքկուսի և բերանք արդարադատք և օրէնք միւիչեան արարչութեանցն, փութավէիր և հրաթափ լեզու յապստամբիցն, և առ հնազանդսն՝ շրթունք լի կաթուածով մեղուի։ Զոր և զերկիւղալի զդէմդ աղաչեմ՝ տեղալ առ իս զմանանայդ երկնային միշտ և յարաժամ։

(Ի ձեռսն սուրբ). — Բարուն իմանալի մեքենայիցն՝ ձեռքդ չորս, որ ունի զվէմն անկեան[1] և զհամատարած լարն վիճակի, որով շարժէ զճախարակ բրսի, և մատամբքն ոսկի յորինէ զպարս աստեղացն. որով հիւսէ զծիրանին և զերկնագոյնն վասն անխախուտ և խօսուն խորանին, ակզբնատպին և անփոփոխ օրինադրին, որ և շարժէ զտապանակ ինքնաշարժին. յորոյ ձեռինն բնաւ էակքս ի կախ պահին, կապալքն լուծանին, և զառանցն հօտքն մակաղին ի մէջօրէի առ լերամբքն, յորում քարկոծին գլացեալքն։ Զոր և մաղթեմ զենմամբ զառանցդ, զի առ չինուած սրբոյ խորանիդ պահեացես զիս միշտ և յարաժամ։

(Ի յոտսն սուրբ). — Դու քառասան ամենեցուն, և անկայարան գարշապար հսկայ սուրհանդակի՝ յոգիս և յերամս զօրու բոցեղինացն, և մուտք անդուռն ի շափիղս աստեղացն, գեղեցիկ ճեմասէր, և առ նշոյլս արեգականն՝ ճաճանչ թափանցիկ. ի ջուրս ծովու՝ անհետազօտելի լոգակ, և ի կարթելն զվիշապն՝ հմուտ որսորդ, և մանուկ խաղասէր. ի յղութիւն ամլոյն՝ սաղմն սուրբ, և ի ծնունդն վկայեալ կնիք և դրոշմ անարատ գերեզմանին, հատ ցորենոյ և ի բերումն արդեանցն և առ մուտսն ի վերնատունն և յիմանալիսն անկարօտ բանալեաց։ Զոր և զգարշապար զերկնակոխ սուրբ արքայիդ համբուրեմ, պահել զիս ի սրահ սրբութեանդ միշտ և յարաժամ։

(Առ եղն սուրբ և ի կնիք նմին ի Յիսուս Քրիստոս Տէրն). — Առ զործունեայ երկնաւոր հովտին և ի շարս քերովբէիցն լծոյն, և ի յամոլդ ընտիր. առ բարդութիւն որայի և հասկին. ի ցնծաբեր որոճդ, և ի յիշումն կենաց հացին. ի հաշտարար զուարակդ, ի շարժումն սայլի[2] աստեղացն. ի յառաջընթաց եզնդ, և առ կատարումն տարւոյն յուսացուցանող երկրավաստակդ. ի վերայ կոհակաց ծովուն ի յակօսապատառ ձեղ, և յուռկանոյ ժողովելոցն ի համբարանդ բարեբարձ. ի բուրաստանս ծաղկոցաց ի շնչալի արածողդ, և առ նազելի լուսինդ իսկ խոկասէր և յիմանալի որոճողդ. երկրպագեմ, զի բարձցես զլուռ իմոյ յարկին[3] միշտ և յարաժամ։

(Ի յեղյիւրն սուրբ). — Պանծալի և լի շափեղակապ[4] և մարգարտահատ[5] եղջիւր կամարաձև, որ ունիս զաղբիւր օծման իւղոյն. յորմէ օծան ոչ միայն օծեալքն ի Մելքիսեդեկէ և որք յապա, (այլ) և աստուած և տէրն քաղաքացն Դաւթի, պարարտութեան ձիթոնն և թափեալ անուամբ իւղոնն՝ գլուխն օծաւ միեղջերուն հզօր և հորթու եղինն՝ որ վազէ ի վրայ լերանց բեթելայ և օծէ զիմանալեացն զպետսն և հասանէ մինչև ի խորինս ամենայն անուանակոչութեամբ, և կաթուած պարարակիդ մ[6] պարարտութեան։ Զոր և պաշտելիդ աղաչեմ զճարպդ անտոչորելի՝ յօծման քո պահեա զիս միշտ և յարաժամ։

(Ի յերեսսն սուրբ). — Երեսօքդ չորիւքդ և հոգմաբեր վարշամակօքդ զքոյ դատեր նոր Սիոնի փութապատառ և բոցակէզ ցուցեր, և զեղեալ զծածկոյթ խաւարն և զմրրիկն բոլորեալ՝ ի մեռաղս սանձեցեր,

1. Յօր. անգամ։
2. Յօր. այլ ի աստեղացն։
3. Ուղղ. հարկին։
4. Շափղիւակապ։
5. Մարգարտայատ։
6. Գուցէ ամենայն։

© National Library of Armenia

և զտիպ քո ցանկական և տէրունական նմանութեան՝ յերես հարսինն յօդեցեր, զոլ խանդաղակաթ ի սէր և ի խնդիր առնախտ փեսային. զոր ի կաթուածէ քոյ պատկերիդ ցանկութեամբ շարժեալ բոլոր էակքս՝ ի նմանել աննմանոյն, որպէս ոմանք որ զտիպդ առին և յարակայ ընդ էակիցդ օրհնաբանին։ Զոր և նոքօք մաղթեմք առ պարարակդ սուրբ՝ զերես ձեիս իմոյ կալ ի համբոյր փեսայիդ միշտ և յարաժամ։

(Ի շուն և սուրբ). — Ցեսակաւ զիմացդ և հարաւարեր շնչողդ լինի փախուցեալ հիւսիսականն սկզ. որթք սաղարթազարդք և տունկք խնկաբերք ի քէն շնչաբերեալ՝ անծախապէս բուրին. ձագք զարնանաբերք և ծիծռունք վճիռնաձայնք[1] ի ձայնեալդ վճիռն առեալ՝ զգալուն յաւիտենից ճչեն, զոր մանակալք և այգեգործք անկարացան, առ ի կթել յերկնաթռիչ բարունակէդ՝ որ երեր պտուղ զպարս աստեղացն և զգունդս հրեշտակացն. զոր լծով քո սքանչելի և լծակցողդ զարմանալի՝ առ գուբ հնձանն ժողովին և ճմլին ի ծոց մեծի արքային։ Զոր և համբուրելով իմ զցանկալի դէմդ արրոյ եղիցեն, զզարնանաբեր և զկենդանարար շունչդ՝ պահել առ իս (աղաչեմ) միշտ և յարաժամ։

(Ի ձեռն սուրբ). — Ի ծրարասէր ձեռնդ տաշխից՝ առ հանգրէնս հարսին զարդու, և ի ջահավառ մատունսդ անձաձրոյթ տալոյն իլոյ՝. ի սեղանամեծար բազուկդ հիւրասիրին Աբրահամու և որդւոց նորա. ի մատունսդ եփփաթաձայն. առ գիրկդ զբզուասէր՝ առեալ մանկանն ի մէջ ա(ա)տենին, և ի սպեղանապատ թաթդ կիսամահին. ի քիւղ և յափդ երկաթիւ և ծովաչափին, և առ թիզդ հանուր էակացս քանակագիտիդ. առ բազուկդ մշատատարած հանգոյն երկնից և բոլոր էակացս պատարագացն նուիրողիդ, երկրպագեմ, զի նուիրեսցես զիս Ցեառնդ միշտ և յարաժամ։

(Ա՛ռ ի յոտսն սուրբ կձղակիսն). — Եղեալ խարիսխ իմանալւոյ խոլանին ի վերայ պատուանդանի ոտիցդ, ուստի ցելեալ լոյսն զնա (զբնաւ), գծիրս աստեղացն, և հանճարագէտս առնէ լին և նորածին արքածնին. զոր ի բերել զկենաց փայտն և զնաւաստին՝ զզլուխն մահաբերին կնգղակահերձ ջախէր, և նուիրէր հողեղինացն զողջակէզքն անգենլի, հաղորդեալս զենմամբ եղինդ՝ կնգղակաւորս արար. առեալ զերինչն լծընկէց՝ լծեալ ի լուծն քաղցրագոյն, և բեռամբ փոքրագոյն երկնավաստակս արար։ Զոր և ճաշակելի սուրբդ աղաչեմ, պահել զիս պատարագելի անձամբ ի լուծ սիրոյ Յիսուսի միշտ և յարաժամ։

(Ա՛ռ արծիւն սուրբ և ի հոգի). — Բաբուն նոր և անշարժ խորանաշինին և անանիծ թելաց ոսկւոյն և արծաթոյն՝ մտաւոր և փոյթ թելամատոյց. և բոց փրձանաց[2] վառեալ ի մէջ եղեգանն և ականցն, և սխտիւ ծերացելոյ անծերանալի հոգւոյն՝ մանուկ նորոգեալ, և թեւոք արիգականն սլացեալ ի վեր, և սովացելոց ձագուցն աղաղակէին ի Ցէր, և ի մարմինն սուրբ ժողովարար պարու արծուեացն, և ձայն ցօղարեր ծանօթ և լուսալիր նկատեալ ի բարձունս զարթուցեալ ննջեցելովք։ Զոր և մաղթեմ համբուրեմ զիմաստութիւնդ արագաթռիչ՝ զարթուցանել ի տառապանաց զբոյ զանձն իմ, վերանալ և կալ առ քեզ միշտ և յարաժամ։ [illegible]

(Վասն աչքոյն[3]). — Գործնականի և անտանելի հողմոյ էին կրողիդ, շնչակալ և բոցայօղ գործնականացն վեհիցն՝ ի վերայ կացողիդ. ի թռիչս պաշտօնասէր աստեղացն՝ կէտ լուսաբաշխ, և շունչ պաշտելոյն ազդեցութեամբն. ի տարակոյսքն զալոյ հողմոյն՝ յայտնութիւն աստիկ հնչմամբ, և վառեալդ առ ի սիրտ անկիզելի նամակաց, և (ի) ծփանս ծովու՝ թռչուն աւետարեր, և նաև կենդանի՝ բարձեալ միշն

1. Ցեղես աղերս ունի Գր. Նարեկացւոյ՝ Ցաղին հետ ի Ս. Ղազար, ուր գրուած է.

«Ցաւիդ եռաստաղիչ բամբիւ զարնանոյդ, . . . Ցաւիդպա(վ)ջեմիս երգ գալիլեայ զուարճից»։

2. Ցոր. կայ՝ տալոյն ի լոյս. սակայն համաձայն Ամկ. Սողոմ. գլ. ԼԱ. 19. «Զվեռս իւր ձգէ յօգուտ, և զմատունս իւր անձանձրոյթ տայ խոյ»։

3. Ուղղելի է՝ փրկանաց, կամ փորձանաց։

© National Library of Armenia

ողամբ. զոր աստղանաճանչ և հարաւադէտ թեւոքդ գոլով միշտ ժողովարան։ Վասն ո-րոյ և զպատուելի զթեւսդ սուրբ աղաչեմ, թոուցեալ զիս ի խորոցս՝ և յանապատդ սիրոյ ինձ դաղարել միշտ և յարաժամ։

(Առ շունչն սուրբ). — Եսայեատես և մարգարէադէտ հրաշիցն՝ վերացեալ հողմն և ծուխ ազդարար, և յանգոյէ ծնեցելոցն ի յընթացսն գիսաւոր, և ամպեղէն թեւոքդ ստինք բազմալեզուք յամենայն զիմաց, և առ հանդերձեալ գոյութիւնսն՝ անախտ սերմն, և բիւրաւոր անուամբք պարուրեալք ի ներքոյ ստեղծասէր թեւի՝ որպէս յան-թարթելի և յանքուն բրացդ խորու. և մահու արձանքն կապարեայ ծնան ի յար-տեանունսդ լուսոյդ։ Զոր և պաշտելի զերկնաւորդ աղաչեմ, զիս ծնանել ի յոյս կենդանի, փառաւորիլ ի քէն միշտ և յա-բաժամ։

(Առ երեսքն սուրբ). — Լուսատու սրան-չելապէս լերանցն՝ երեսքդ չորս, և հոլովս աստեղացն հայելի կերպընկալ. բարբառ ի փողոյն և պատգամաձայն հոգմոյն շուե-մարան անթերի, և համատարած լիճ ջրոց յուսոյն՝ շաղալից և մշտակաթ. ևս և հերք սուրբ և կիսագունդ, և ի հողեղէն ի մահիճ տարբիս ճաշակ և որակ ճեմասէր և ինքնազարթոյց. ի յընծայս տասանորդաց էիդ ծխելի կնդրուկ, և մշտակէզ մորենի, և նուէրքդ ինքնամատոյց։ Որով մաղթեմք առ դէմադ նուիրագործ՝ նուիրել զիս Ցեառն միշտ և յարաժամ։

Ի ծիրս կռանաց շրթիթ[1] շարեալ խօսուն շափիւղայ, և հալուէ գոհար հանեալ ի վիմաց, զոր ընդելուզեալ պսակն ի քարէ պատուականէ. յոր և աչօքն զրոլորս պսակէ առեալ՝ զոր ակն անհիւթ իմաստիւք զարդարեաց զհրեշտակսն, և զգարշապար երևելեացս մտաց՝ կացոյց առ վէմդ երկ-նաթռիչս. և զորս ի խաղդ գեղոյդ՝ որ ի վիմդ զարբեալսն և զլուացեալսն՝ հանգու-ցանէ ձագախառն երամօք ի յոստս ոսկե-սաղարթս. Զոր և անձանձիր կալով թեւոքդ երկնատարած ի շրթանցդ շնչաբերեալ՝ և զիս թռուցեալս առ վէմդ սուրբ միշտ և յարաժամ։

(Առ մագիս սուրբ արծուոյն). — Կայենից բնաւից անիզելի կապ կախման, մագիլ և կնիք լուսապայծառ, և նուէրս պաշտելի անձանձիր, հրեշտակացն՝ նախաշաւիղ օդա-պատառ, ի քայլս գնացից աստեղացն իմաստիցն՝ կարապետ լուսաբաշխ, և զար-շապար ինքնավար[2] ընդդէմ սատկութեան հողմոյն. արձակ իմաստից և բաժանման ձայնիցն՝ բանուն և կշիռ լուսալիր, բազ-մաձոյլ և հողեղէն գնդիս՝ ծոցածին ծնող, և յանկիւն Յաղիմայ՝ բոլոր ստինք մշտա-բուխ ի ինդիր ունականացն[3] զմրիտից. կենդանի բազմածին, և առ հովանաւէր ծնունդսն՝ արմաւենի անթառամ։ Զոր և մաղթեմ առ արծիւդ բազմածին, պահել ի շրթունս իմ զշունչդ՝ բազմամանուդ միշտ և յարաժամ։

ԼՈՒԾՄՈՒՆՔ

Աթոռոց էին մեկնութեանց արժան է միտ դնել, և հասանել բանիցն՝ զոր ծա-նուցանի ի սուրբ Հոգւոյն՝ տառիւ, յորմէ սկսայց ցուցանել իմաստնոցն զաստուա-ծային աթոռն՝ որ կայ ի վերայ չորեք նախաներբողեալ կենդանեացն. և քառա-պատկեր չորս կենդանիքս կան ի վերայ վեց խառնուածոցս, որք են այսոքիկ. մին՝ զոր ասեն. « Ահա հողմն վերացեալ գայր ի հիւսիսոյ ». երկու՝ « Եւ ամպ մեծ ի նմա ». երեք՝ « Եւ լոյս շուրջ զնովաւ ». չորս՝ « Եւ հուր փայլատակեր ի նմա ». հինգ՝ « Եւ ի միջի նորա որպէս զտեսիլ բազմազունի ականց ». վեց՝ « Եւ ճառա-գայթք ի նմա ». զոր և Ցէր հրաշիցն յայտնեսցէ և մեզ զհշմարիտն առ ի ճառել միշտ և յարաժամ։

1. Թուի լինել՝ շրթիթ։
2. Ցօր. ինքնավառ.
3. Ուղղ. ուռնականացն։
4. Ցօր. ի լուսոյդ։

© National Library of Armenia